ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 37-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Մեր Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի 37-րդ տարեդարձի առթիվ հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները:

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի սրտե մաղթում ենք հայ ժողովրդին ու վերածնված Հայրենիքին անսասանություն և հարատև վերելք դեպի նորանոր հաղթանակներ կյանքի բոլոր բնագավառներում, սովետական եղբայրացած ժողովուրդների ուզոր ու փառապանծ միության մեջ, խաղաղությամբ ու բարգավաճությամբ:

Կեցցե՛ հայ ժողովուրդը:

Կեցցե՛ մեր բարեխնամ Հայրենի կառավարությունը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ընդունեցեք մեր ջերմագին շնորհավորանքները Սովետական Հայաստանի 37-րդ տարեդարձի առթիվ: Թող Տերը շեն ու անսասան պահի հայոց Մայր Հայրենիքը սովետական ժողովուրդների մեծ Միության մեջ, բարգավաճությամբ և խաղաղությամբ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հանեցեք ընդունել մեր ջերմ շնորհակալությունը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած շնորհավորանքների և բարի ցանկությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՑԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Թույլ տվեք խորապես շնորհակալություն հայտնել Ձեզ Սովետական Հայաստանի 37-րդ տարեդարձի առթիվ մեզ հղած շնորհավորությունների և բարեմաղթությունների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ